

Որակի հոչակագիր Բեռնափոխադրումների սակագների ինդեքս

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս
0.2	Ոլորտը	Բեռնափոխադրումների սակագներ
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Բաժնի պետ Մարիամ Երիցյան Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին Հայաստանի Հանրապետություն, 0010, Երևան, Հանրապետության պողոտա, Կառավարական շենք 3, Հեռախոս՝ +374 11 564 566 Էլ. Փոստ: <a href="mailto:mariam_yeritsyan@armstat.am">mariam_yeritsyan@armstat.am</a> , <a href="mailto:info@armstat.am">info@armstat.am</a>
0.4	Նպատակը և պատմությունը	Բեռնատար տրանսպորտով բեռնափոխադրումներ սակագների շարժի դինամիկայի վիճակագրական ուսումնասիրության նպատակը բեռնափոխադրումների սակագների մակարդակի փոփոխության որոշումն է ըստ տարբեր ցուցանիշների՝ փոխադրվող բեռնատեսակի, դրա քանակի առաքման չափերի, տեղափոխման արագության, շարժակազմի տեսակի և այլն: Բեռնափոխադրումների սակագների փոփոխության ուսումնասիրումն իրականացվում է հիմնական տրանսպորտային գործունեություն իրականացնող կազմակերպությունների պարբերական հետազոտությունների միջոցով: Բեռնափոխադրումների սակագների հաշվարկի համար գնային տեղեկատվության աղբյուր են հանդիսանում երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային տրանսպորտի տեսակներով բեռնափոխադրումների ծառայությունների սակագները: Տրանսպորտի ծառայությունների սակագները տրանսպորտային կազմակերպությունների կողմից բեռների փոխադրման դիմաց իրենց օգտագործողներից գանձվող փոխադրած ծախսերն են: Սակագները սահմանվում են բեռնափոխադրման ծառայությունների իրականացման մասին պայմանագրի ստորագրման պահին՝ կողմերի համաձայնությամբ:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Բեռնափոխադրումների սակագների ինդեքսի վերաբերյալ տեղեկատվությունն իրենից ներկայացնում է տրանսպորտի ոլորտում ընթացիկ գնային իրավիճակի գնահատականը, որն օգտագործվում է Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի (այսուհետ՝ Արմստատ) կառուցվածքային ստորաբաժանումներում բեռնափոխադրումներից ստացված հասույթների լրահաշվարկների համար, հանդիսանում է համադրելի գներով համախառն ներքին արդյունքի հաշվարկման համար օգտագործվող դեֆլյատորներից

		<p>մեկը, ինչպես նաև օգտագործվում է մեծ թվով պետական և մասնավոր կազմակերպությունների և ընդհանուր հանրության շահագրգիռ մարմինների կողմից՝ տնտեսական զարգացումներին հետևելու և վերլուծություններ իրականացնելու համար:</p>
0.6	<p>Տեղեկությունների աղբյուրները</p>	<p>Ցուցանիշի կազմման հիմնական աղբյուրը՝ վիճակագրական հաշվետվությունով իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ամսական պարբերականությամբ հավաքվող տեղեկատվությունն է:</p> <p>Բեռների փոխադրման սակագների գրանցումը տրանսպորտային կազմակերպություններում կատարվում է հաշվետո ամսվա 25-ին՝ վիճակագրական հաշվետվական ձևերի լրացման միջոցով:</p> <p>1. Երկաթուղային տանսպորտ</p> <p>Երկաթուղային տրանսպորտով բեռների փոխադրման սակագների մասին տեղեկատվությունը Արմատատի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին ներկայացվում է ՁԵՎ ԹԻՎ 1-ՄԱԿԱԳԻՆ (երկաթուղի) (ամսական) վիճակագրական հաշվետվական ձևով:</p> <p>Երկաթուղային տրանսպորտով բեռների փոխադրումը կատարվում է երեք ուղղություններով՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- բեռների առաքումը հանրապետությունից դուրս,</li> <li>- բեռների ներկրումը հանրապետություն,</li> <li>- ներհանրապետական բեռնափոխադրումներ:</li> </ul> <p>2. Ավտոմոբիլային տրանսպորտ</p> <p>Ավտոմոբիլային տրանսպորտով բեռների փոխադրման սակագների մասին տեղեկատվությունը ներկայացվում է ՁԵՎ ԹԻՎ 1 ՄԱԿԱԳԻՆ (ավտո)(ամսական) վիճակագրական հաշվետվական ձևով:</p> <p>Ավտոմոբիլային տրանսպորտով բեռների փոխադրումը կատարվում է հետևյալ ուղղություններով՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- ներքաղաքային</li> <li>- ներմարզային</li> <li>- միջմարզային</li> <li>- միջպետական (ներմուծում)</li> <li>- միջպետական (արտահանում):</li> </ul> <p>Բեռնատար տրանսպորտի գործունեությունը շատ հաճախ կախված է օգտագործողների պահանջարկի փոփոխությունից: Դա դժվարեցնում է ընտրված ծառայություն-ներկայացուցչի սակագների մասին պարբերաբար տեղեկատվության ստացումը և անհրաժեշտություն է առաջացնում որոշել նրա պայմանական մեծությունը բեռնափոխադրումների սակագների ինդեքսների դինամիկ շարքի անընդհատությունն ապահովելու համար:</p> <p>Միջազգային փորձը և գոյություն ունեցող պրակտիկական առաջարկում են բեռնատար տրանսպորտի ժամանակավորապես բացակա ծառայության գնի (սակագնի) լրահաշվարկի հետևյալ մեթոդները.</p>

		<ul style="list-style-type: none"> <li>- ամենավերջին (նախկին) գրանցված սակագնի օգտագործումը,</li> <li>- հաշվարկային սակագնի կիրառումը, որը ստացվում է հաշվետու ժամանակահատվածում ձևավորված ամենավերջին գրանցված սակագինը այլ (նմանատիպ) բեռի կամ երթուղու սակագնով ճշգրտելով, ուղղելով:</li> <li>- նախապես ընտրված բեռի (երթուղու) տեսակի փոխարինումը սպառողական հատկանիշներով, չափանիշներով մոտ մեկ այլ բեռով (երթուղով):</li> </ul> <p>Բացակա փաստացի սակագնի փոխարինման չափանիշներով այս կամ այն մեթոդի կիրառումն իրականացվում է սակագնի շարժի մանրակրկիտ տնտեսագիտական վերլուծության արդյունքում:</p> <p>3. Օդային տրանսպորտ</p> <p>Օդային տրանսպորտով բեռների փոխադրման սակագների մասին տեղեկատվությունը ներկայացվում է ՁԵՎ ԹԻՎ 1 ՍԱԿԱԳԻՆ (քաղ.ավիացիա) (ամսական) վիճակագրական հաշվետվական ձևով: Հաշվետվական ձևում լրացվում են բեռնափոխադրումների առավել ներկայացուցչական (տարածված) ուղղությունները, տրանսպորտային ծառայության փաստացի ձևավորված սակագները, որոնք իրենցից ներկայացնում են բեռների փոխադրման սահմանված վարձաչափերը՝ առանց ԱԱՀ-ի: Օդային տրանսպորտի գծով հետազոտությունն իրականացվում է բեռների հոսքի հիմնական ուղղություններով՝ ոչ ԱՊՀ և ԱՊՀ երկրներ բեռների արտահանում և ներկրում:</p> <p>4. Խողովակաշարային տրանսպորտ</p> <p>Խողովակաշարային տրանսպորտով գազի փոխադրման սակագների մասին տեղեկատվությունը ներկայացվում է ՁԵՎ ԹԻՎ 1-ՍԱԿԱԳԻՆ (խողովակ) (ամսական) վիճակագրական հաշվետվական ձևով: Խողովակաշարային տրանսպորտով գազի փոխադրման սակագինը հաշվարկվում է ըստ</p> <ul style="list-style-type: none"> <li>- բնական գազի փոխադրման</li> <li>- բնական գազի բաշխման:</li> </ul>
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների)	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:

	Ծանրաբեռնվածությունը	
<b>1 Բովանդակություն</b>		
1.1	Բովանդակության նկարագիրը	<p>Տրասպորտի տարբեր տեսակներով բեռնափոխադրումների սակագների ինդեքսը արտադրական բնույթի ծառայությունների հատվածի գործունեությունը բնութագրող վիճակագրական ցուցանիշներից մեկն է:</p> <p>Այն բնութագրում է տրանսպորտի տարբեր տեսակներով բեռնափոխադրումների ծառայությունների սակագների փոփոխությունները:</p> <p>Բիզնես ռեգիստրում գրանցված բեռնափոխադրումներ իրականացնող տրանսպորտային կազմակերպություններում հաշվառումն իրականացվում է սակագների համատարած դիտարկմամբ: Բեռնափոխադրումների սակագների ինդեքսը հաշվարկվում է ամսական կտրվածքով:</p> <p>Բեռնափոխադրումների սակագների ամփոփ ինդեքսը հաշվարկվում է երկաթուղային, ավտոմարիլային, օդային և խողովակաշարային տրանսպորտի ինդեքսների ագրեգացման եղանակով:</p> <p>Բեռնափոխադրումների սակագների ինդեքսը հաշվարկվում է Լասպեյրեսի բանաձևով:</p> <p>Մինչև 2011թ. Բազիսային ժամանակաշրջանն ինդեքսների և կշիռների համար համարվում էր նախորդ տարվա դեկտեմբերը: 2011 թվականի հունվարից հաշվետու ամսվա ինդեքսը հաշվարկվում է նախորդ տարվա նկատմամբ, որպես բազիսային ժամանակաշրջան ինդեքսների և կշիռների համար:</p> <p>Բեռնափոխադրումների սակագների ինդեքսը հաշվարկվում է հետևյալ կտրվածքներով`</p> <ul style="list-style-type: none"> <li>- հաշվետու ամիսը նախորդ ամսվա նկատմամբ,</li> <li>- հաշվետու ամիսը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ,</li> <li>- հաշվետու ամիսը նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ,</li> <li>- աճողական կարգով` նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ:</li> </ul>
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p><i>Համակցություն</i></p> <p>Բեռնափոխադրումների սակագների ինդեքսի հաշվարկման համար ընտրվում են տրանսպորտային (բազային) կազմակերպություններ, որոնք իրենց գործունեությունը ծավալում են ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ ՀՀ սահմաններից դուրս: Բազային կազմակերպությունների ընտրանքը կատարվում է Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից:</p> <p><i>Ճյուղային ընդգրկունություն</i></p> <p>Հետազոտման համար ընտրվում են տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (այսուհետ` ՏԳՏՀԴ խմբ. 1) տրանսպորտ և կապ (բաժին 1) բաժնին համապատասխան տնտեսական գործունեություն իրականացնող</p>

		<p>կազակերպությունները:  ՏԳՏՀԴ խմբ. 1-ի 61, 63, 64 հատվածները ներառված չեն բեռնափոխադրումների սակագների ինդեքսի հաշվարկի մեջ՝ այդ ծառայությունների բացակայությամբ պայմանավորված:</p> <p><i>Աշխարհագրական ընդգրկունություն</i>  Ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը և Երևան քաղաքը:</p> <p><i>Փոփոխականներ</i>  Սակագին. Հաշվետվությունների լրացման համար հիմք են հանդիսանում հաշվետու ժամանակաշրջանում տրանսպորտի բոլոր տեսակների գծով կատարված բեռնափոխադրումների սակագների մասին տեղեկությունները առանց ԱԱՀ-ի՝ վիճակագրական հաշվետվական ձևերի լրացման միջոցով:  Ինդեքսներ. Ջուտ գնային փոփոխությունը արտացոլող ցուցանիշներ ժամանակի կամ տարածության մեջ:  Կշիռների սկզբնաղբյուրներ. Բեռնափոխադրումների սակագների ինդեքսի հաշվարկման համար որպես կշիռ օգտագործվում են բեռնատար տրանսպորտի կազմակերպությունների նախորդ տարվա տրանսպորտային գործունեությունից ստացվող հասույթները:  Յուրաքանչյուր տարի բեռնափոխադրումների սակագների ինդեքսի հաշվարկման համար իրականացվում է կշիռների արդիականացում՝ վերահաշվարկ:  Ավտոմոբիլային, երկաթուղային և օդային տրանսպորտի ինդեքսները հաշվարկելու համար կշիռները հաշվարկվում են ՁԵՎ ԹԻՎ 1-ԱՎՏՈ (ամսական), ՁԵՎ ԹԻՎ 65 ԵՐԿԱԹ (տարեկան), ՁԵՎ ԹԻՎ-2 ԵՐԿԱԹ (ամսական) և ՁԵՎ ԹԻՎ-65 ԱՎԻԱ (տարեկան) հաշվետվական ձևերի ցուցանիշների հիման վրա: Խողովակաշարային տրանսպորտի ինդեքսները հաշվարկելու համար կշիռը հաշվարկվում է ՁԵՎ ԹԻՎ 1-արտ (ամսական) հաշվետվական ձևի ցուցանիշների հիման վրա:</p> <p><i>Վիճակագրական չափորոշիչներ</i>  Ինդեքսների ամենացածր մակարդակը հաշվարկվում է որպես տվյալ տրանսպորտային տեսակով բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների արձանագրված սակագների ինդեքսային գործակիցների (գների հարաբերականների) միջին երկրաչափական մեծությունների հարաբերակցություն:</p> <p><i>Խմբավորումներ</i>  Բեռնափոխադրումների սակագների ինդեքսները հրապարակվում են ըստ տրանսպորտի առանձին տեսակների՝ երկաթուղային, ավտոմոբիլային, օդային, խողովակաշարային:</p>
--	--	---

<b>2. Ժամանակայնություն</b>		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Յուրաքանչյուր ամսվա 25 – ին:
2.2	Հրապարակման ամսաթիվը	Ամփոփ տարբերակով ամսական տվյալները հրապարակվում են հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 35/36-րդ օրը:
2.3	Ճշտապահություն	Վիճակագրական տվյալները որպես կանոն հրապարակվում են առանց ուշացումների, նախապես սահմանված է ժամանակացույցին համապատասխան:
2.4	Հաճախականությունը	Ամսական
<b>3. Ճշգրտություն</b>		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Հետազոտությունը հիմնված է բեռնափոխադրումների իրականացնող տրանսպորտային ընտրանքային կարգով ընտրված բազային կազմակերպություններում սակագների դիտարկման վրա: Ընդհանուր ճշգրտությունը համարվում է բավարար:
3.2	Անճշտության աղբյուրները	Անճշտության աղբյուր կարող է լինել. <ul style="list-style-type: none"> <li>բեռնափոխադրման, որպես ծառայություն ներկայացուցչի որակական փոփոխությունը,</li> <li>կազմակերպության կողմից ներկայցրած ոչ ճիշտ գնային տեղեկատվությունը,</li> <li>տվյալների մուտքագրման մեխանիկական սխալները:</li> </ul>
<b>4. Համադրելիություն</b>		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Ցուցանիշի հաշվառումը տարվում է 1997 թվականից: Տարիների ընթացքում կատարելագործվել են բեռնափոխադրումների սակագների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը և կիրառվող դասակարգիչները:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Հայաստանի Հանրապետությունում հաշվարկվում է միայն մեկ բեռնափոխադրումների սակագների ինդեքս, ուստի այն համադրելի չէ այլ գնային ինդեքսների հետ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Հրապարակված տվյալները համարվում են վերջնական: Դրանք կարող են ենթարկվել վերահաշվարկման միայն տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված ճշգրտումներ հիման վրա:
<b>5. Մատչելիություն</b>		
5.1	Տարածման ձևաչափ	<b>Հրապարակումներ</b> <b>Նորությունների թողարկում</b> <b>Ամսական, եռամսյակային հրապարակումներ</b> «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական՝ ամսական, եռամսյակային զեկույց (հայերեն, ռուսերեն):  <b>Տարեկան հրապարակումներ</b> «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն,

		<p>անգլերեն):</p> <p>«Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն, անգլերեն):</p> <p>«Գները և գների ինդեքսները ՀՀ-ում» վիճակագրական ժողովածու (հայերեն, անգլերեն):</p> <p><b><i>Ինտերնետային հասցե</i></b></p> <p>Հրատարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն, անգլերեն լեզուներով, հետևյալ հասցեով. <a href="https://www.armstat.am/am/?nid=82">https://www.armstat.am/am/?nid=82</a>,  <a href="https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6&amp;rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6">https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6&amp;rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</a></p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	Ռեսպոնդենտներից հավաքվող վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով:
5.3	Փաստաթղթավորումը	Մեթոդաբանության պարզաբանումները հասանելի են՝ «Հայաստանի վիճակագրական տարեգրքում», «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների եռամսյակային թողարկումներում, էլեկտրոնային տարբերակով Արմստատի պաշտոնական կայքում՝ <a href="http://www.armstat.am">http://www.armstat.am</a> :
5.4	Այլ տեղեկատվություն	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=373">https://www.armstat.am/am/?nid=373</a> :
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: